# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«23»«Օգոստոսի»2018թ
ԼՄԱՀ № 0156

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ
գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33 – րդ հոդված 4 – րդ կետի 9) ենթակետով կից Ձեզ եմ ներկայացնում Լոռու մարզի Արևաշող համայնքի ղեկավարի 2018 թվականի թիվ 13 որոշումը:

Առդիր՝ __1__ թերթ:

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ. ՊԱՊԻԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 Օգոստոսի 2018թ. թիվ 13

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 06-021-0012-0040 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՔԵԼ, ԷՄՄԱ, ԻԼԻԱ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում 06.021-0047-0007 ծածկագրի տակ գտնվող 0,12309 հա մակերեսով հողամասը հանդիսացել է Առաքել, Էմմա, Հովիկ, Վաղարշ, Իլիա Դունամալյանների և Մենուհի Մանուկյանի ընդհանուր համատեղ սեփականությունը, որին վերջիններս տիրապետել, տնօրինել և օգտագործել են մինչև սեփականաշնորհումը: Նշված հողամասի վրա վերջիններիս կողմից կառուցվել է 125,67 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տուն և 23,1 քմ մակերեսով անասնաշենք, որոնք Հովիկ, Վաղարշ, Դունամալյանների և Մենուհի Մանուկյանի կողմից իրենց բաժնեմասերը 26.07.2018թ. – ին նվիրատվության պայմանագրով օտարվել են Առաքել, Էմմա և Իլիա Դունամալյաններին, իսկ նախաքան այդ 2014թ. – ին վերջիններիս համաձայնությամբ Առաքել, Էմմա և Իլիա Դունամալյանների կողմից վերը նշված բնակելի տանը կից ինքնակամ կառուցվել են 55,25 քմ, 38,36 քմ, բնակելի մակերես և 126,52 քմ ինքնակամ երկրորդ հարկ, 14,10 քմ բաց պատշգամբներ. 12,44 քմ պարիսպ և 10,15 քմ նկուղ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 256,82 քմ:*

*Նկատի ունենալով, որ վերը հիշատակված ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանված շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքի 60 – րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի պահանջներով, ՀՀ Կառավարության 2006թ. – ի մայիսի 18 – ի 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23 – րդ հոդվածի 6 – րդ կետով և հիմք ընդունելով Արտյոմ Սաքանյան ԱՁ – ի կողմից կազմված հատակագիծը, 26.07.2018թ. – ի անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ

1. *Ճանաչել օրինական Առաքել Հովակիմի (ծնված 1951թ.), Էմմա Մամիկոնի (ծնված 1956թ.), Իլիա Առաքելի (ծնված 1981թ.) Դունամալյանների կողմից ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքում 06-021-0047-0007 ծածկագրի տակ գտնվող սեփականության իրավունքով իրենց պատկանող 0,12309 հա հողամասի վրա 2014 թ – ին ինքնակամ կառուցված 220,13 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 14,10 քմ մակերեսով բաց պատշգամբը, 10,15 քմ մակերեսով նկուղը, 12,44 քմ պարիսպը:*
2. *Օրենքի ուժով ճանաչել Առաքել Հովակիմի (ծնված 1951թ.), Էմմա Մամիկոնի (ծնված 1956թ.), Իլիա Առաքելի (ծնված 1981թ.) Դունամալյանների սեփականության իրավունքը իրենց պատկանող 0,12309 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա 1990-2014թթ – ին կառուցված 345,8 քմ բնակելի տան, 23,1 քմ անասնաշենքի, 14.10 քմ բաց պատշգամբի, 10,15 քմ նկուղի, 12,44 քմ պարիսպների նկատմամբ:*
3. *Հանձնարարել հաշվապահին իրականացնելու ինքնակամ կառույցների համար օրենքով սահմանված վճարների գանձման աշխատանքները՝ գանձելով 141251 (մեկ հարյուր քառասունմեկ հազար երկու հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ:*
4. *Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 – օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:*
5. *Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:*
6. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԴԱԴԻԿՅԱՆ